

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
- Կ. Հարությունյան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Ա. Ալեքսանյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Վ. Զիլավյան ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
- Ռ. Հարությունյան «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Յու. Շուքրության ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս
- Հ. Ավոյան «Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն
- Կ. Վարդանյան «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
- Ա. Թոռոյան «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Մ. Լու Փափազյան «Է Փի Զի Լեբս ԱՄԱԲ» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
- Բ. Ենգիբարյան «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Վ. Մասարաջյան «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Վ. Աբազյան «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
- Ա. Պյատախին –«ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ա. Գրիգորյան Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար

### Հրավիրվածներ՝

Վ. Գաբրիելյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Վ. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարար

Դ. Սարգսյան ՀՀ ֆինանսների նախարար

Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Ռ. Ալավերդյան ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ

Վ. Միրումյան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

Վ. Կոտիկյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար

Ա. Հարությունյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Ա. Քուչուկյան «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ

Է. Մանուկյան ԵՊՃՀ-ի պրոֆեսոր, «Իսմա» ՍՊԸ-ի տնօրեն

Օ. Մանուկյան «Իսմա» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Մկրտչյան Վիկիպեդիա զարգացման կորորդինատոր

Դ. Սանդուխչյան «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի իրաքանական տնօրինության տնօրեն

Ա. Սարգսյան «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի ՏՏ զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Մ. Սարգսյան «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի ՏՏ զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----  
(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի հետ քննության առնել Տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի N 23.12/[134366]-12 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի կատարման հնարավորության հարցը՝ հաշվի առնելով միջազգային վարկանիշ ունեցող կոնկրետ վերապատրաստման կենտրոններում անց կացվող դասընթացները.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝

ա. ՏՏ նոր ռազմավարության նախագծից հանել կիբեր անվտանգության կենտրոնի ստեղծման վերաբերյալ միջոցառումները և հավանություն տալ նախագծի խմբագրված տարբերակին,

բ. առանձին քննարկման առարկա դարձնել կիբեր անվտանգության կենտրոնի ստեղծման հարցը, որը համահունչ կլինի Ազգային անվտանգության խորհրդի հայեցակարգին.

3) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ երիտասարդ մասնագետների գործուղման (աշխատելու) վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի հետ կապված բոլոր նյութերը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն,

4) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ երիտասարդ մասնագետների գործուղման (աշխատելու) վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի կնքման հարցը ներառել Հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգ.

5) առաջարկել «Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Ավոյանին վիզա ստանալու ժամկետի ուշացման կոնկրետ դեպքի հետ կապված փաստաթղթերը ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին.

6) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ երիտասարդ մասնագետների գործուղման (աշխատելու) վերաբերյալ միջկառավարական

համաձայնագրի կնքման հետ կապված հարցը քննարկել ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի և ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի հետ և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

7) հանձնարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանին՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանի հետ քննարկել գործուղումների (հատկապես նորաստեղծ ընկերությունների աշխատողների գործուղման օրապահիկի նվազագույն ծախսերի սահմանման) ծախսերի փոխհատուցման հետ կապված հարցը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան առաջարկություն:

8) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին՝ ներկայացնել գրավոր պատասխան՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի կողմից ներկայացված պետական գնումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի ընդունման նպատակահարմարության մասին:

2. Էլեկտրոնային առևտրի ժամանակ հարկային և մաքսային ոլորտում առկա խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին՝

ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին գրավոր ներկայացնել ՏՏ ոլորտի ընկերությունների՝ դրամաշնորհի շրջանակներում ԱԱՀ-ով հարկման բոլոր դեպքերը,

բ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում հաշվարկային ՏՏ ոլորտի մարքեթինգային ընկերություններում առկա խնդիրների քննարկման և պարզաբանման նպատակով ներկայացնել մասնակիցների 5 թեկնածություն:

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝

ա. համատեղ եռամսյա ժամկետում քննարկել առցանց եղանակով ֆիզիկական անձանց հայտարարագրման ծածկագրերի տրամադրման դասընթացների և քննությունների գործընթացի կազմակերպման, ինչպես նաև Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրում

ներառված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառման հնարավորության հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկներ,

բ. քննարկել SS ոլորտի ընկերությունների՝ դրամաշնորհի շրջանակներում ԱԱՀ-ով հարկման բոլոր դեպքերը և տալ առարկայական կարգավորումներ:

3. «Վիքիպեդիա Հայաստան» նախագծերի զարգացմանը խոչընդոտող խնդիրների մասին

-----  
(Ս. Մկրտչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի և Վիքիպեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի նախագահ Ս. Մկրտչյանի հետ համատեղ մեկամյա ժամկետում ևս մեկ անգամ քննարկել «Վիքիպեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության առաջարկը և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

4. Բուհական գլոբալ հանրագիտարանի ստեղծման անհրաժեշտության մասին

-----  
(Է. Մանուկյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Վ. Գաբրիելյանին, կրթական բարեփոխումների շրջանակներում, բոլոր շահագրգիռների հետ քննարկել բուհական գլոբալ հանրագիտարանի ստեղծման հնարավորության հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ